

ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՀԱՍԿԱՆԱԽ ԼԵԶՎՈՎ, ԱՆՀԱՊԱԴ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՈՐԵՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈ

Էմմա Ավագյան

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կիրմինալիստիկայի ամբիոնի կիրմինալիստիկայի լաբորատորիայի ավագ լաբորանտ, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի գլխավոր մասնագետ

Իրավական պետության առկայության պարագայում առաջնահերթ խնդիրների շարքում են անձանց իրավունքների պաշտպանության պատշաճ կազմակերպումն ու ապահովումը: ՀՀ Սահմանադրությամբ պետությունը պարտավանություն է ստանձնում ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (ՀՀ Սահմանադրություն հոդված 3-րդ): Նշված խնդրի ճշգրիտ իրականացումը հատկապես կարևորվում է քրեական դատավարության ոլորտում, քանի որ այստեղ առկա են անձի իրավունքների և ազատությունների խախտման առավել լուրջ վտանգներ:

Մեղադրյալի իրավունքների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մեղադրանքի մասին տեղեկացվելու իրավունքը: Միայն մեղադրանքի մասին տեղեկանալուց հետո մեղադրյալը կարող է ձեռնամուխ լինել իր պաշտպանության կազմակերպմանը: Մեղադրյալի այս կարևորագույն իրավունքն ամրագրում է ստացել ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքում: Այսպես՝ Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հանցագործության կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ և հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, (...):

Այս կարևորագույն դրույթն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ «ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին (...):»:

Անձն այս իրավունքից օգտվում է ինչպես այն դեպքում, երբ նրան պաշտոնապես մեղադրանք է առաջադրվում¹, այնպես էլ երբ նրա նկատմամբ սկսվում է իրականացվել քրեական հետապնդում (ձերբակալում, խուզարկություն, բերման ենթարկում և այլն)²: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը միմյանցից հստակ տարանջատում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, մեղադրանք առաջադրելու, ինչպես նաև քրեական հետապնդման ինստիտուտները:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պետք է պարունակի ա-

¹ St´u Европейский суд по правам человека. Т. 1 М., 2000 р., էջ 310 (дело “Девеер против Бельгии”):

² St´u նույն տեղում, էջեր 388-389 (дело “Экле против ФРГ”):

ռաջադրվելիք մեղադրանքի էությունը: Համապատասխան որոշում կայացնելուց հետո քննիչը մեղադրյալին իրազեկում է մեղադրանքի մասին: Այս տարանջատումն ունի կարևոր նշանակություն, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 202-րդ հոդվածը որևէ ժամկետ չի սահմանում, թե նախաքննության որ պահին քննիչը պետք է որոշում կայացնի անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Այս հարցում օրենսդիրը նախատեսել է մեկ բացառություն: Այսպես, անձը ձերբակալված կարող է պահվել մինչև 72 ժամ, որը լրանալուց հետո քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կասկածյալին ազատել արգելանքից կամ որոշում ընդունել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 62):

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահը որոշում է քննիչը, եթե անձը մինչ այդ կասկածյալի կարգավիճակ չի ունեցել: Պրակտիկայում հաճախ այս հանգամանքն օգտագործելով՝ քրեական հետապնդման մարմինը նման որոշում է կայացնում նախաքննության ավարտից անմիջապես առաջ և փաստորեն զրկում է մեղադրյալին իրացնել իր դատավարական իրավունքները:

Դեռևս Ա. Կոնինը նշում էր, որ «անձին մեղադրյալ ներգրավելու հարցում զգուշությունն անհրաժեշտ է: Դա ոչ միայն իրավաբանական, այլև բարոյական պահանջ է: Սակայն զգուշությունը չպետք է շփոթել դիտավորյալ դանդաղկոտության հետ, որն ի չիք է դարձնում մեղադրյալի իրավունքները»¹: Ա. Կոնին իրավամբ քննադատում էր «միակողմանի մեղադրական գործունեությունը», երբ քննիչն անձին որպես մեղադրյալ ներգրավում է նախաքննության վերջում՝ մինչև գործը դատախազին ուղարկելը, ինչը մեղադրյալին փաստորեն զրկում է ժամանակին և իրապես պաշտպանվելու հնարավորությունից²:

Ուստի առաջարկում ենք քր. դատ. օր.-ի 202-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու բավարար ապացույցների համակցության առկայության դեպքում քննիչը կամ դատախազն *անհապաղ* պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին»: Այս կարգն ավելի կերաշխավորի մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը:

Որպեսզի Կոնվենցիայով նախատեսված մեղադրյալի իրավունքը գործնականում իրագործվի, անհրաժեշտ է նախ բացահայտել «մեղադրանք» հասկացությունը: Գործող քրեական դատավարության օրենսդրությամբ մեղադրանքը բնութագրվում է որպես սույն օրենսգրքով նախատեսված հիմնավորում որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարք կատարելու մասին (ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 20-րդ կետ): Վճռաբեկ դատարանը Ա. Սերոբյանի վերաբերյալ որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել «մեղադրանք» հասկացության վերաբերյալ և նշել, որ այն ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը: Սա նշանակում է, որ եթե «մեղադրանք» եզրույթը հասկացվի սոսկ «քրեաիրավական որակում» իմաստով և չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքն առարկայագուրկ է³:

Ոչ միայն Վճռաբեկ դատարանը, այլ նաև Եվրոպական դատարանը «մեղադրանք» հասկացության ներքո ներառում են ինչպես իրավական բնութագիրը, այնպես էլ՝ փաստականը: Այսպես, Եվրոպական կոնվենցիան օգտագործում է «մեղադր-

¹ А. Кони, Собр. Соч. в 8-ми Т. 4., М., 1967 г., т. 2 186:

² Տե՛ս նույն տեղում, էջ 136:

³ Տե՛ս «ՀՀ Վճռաբեկ դատարանի Ա. Սերոբյանի գործով 2007թ. մարտի 30-ին կայացած թիվ ՎԲ-46/07 որոշումը»:

րանքի բնույթ և հիմք» հասկացությունը, որի բովանդակությունը բացահայտվում է Եվրոպական դատարանի որոշումներում: «Բնույթ»-ը նշանակում է այն հանցանքը, որի համար նա մեղադրվում է (այն է՝ իրավական բնութագիր), իսկ «հիմք» բառը ցույց է տալիս այն գործողությունները, որոնք ենթադրաբար կատարվել են¹:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի պահանջն է՝ մեղադրյալին *անհապաղ և իրեն հասկանալի լեզվով* տեղեկացնել առաջադրված մեղադրանքի մասին: Գործող օրենսդրությամբ մեղադրյալը մեղադրանքի մասին իրագեկվում է, երբ նրան մեղադրանք է առաջադրվում, որը պետք է իրականացվի մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 203, մաս 1):

Անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելուց հետո մեղադրյալին պետք է *անհապաղ* տեղյակ պահել մեղադրանքի մասին: Այդ պահից անձն իմանում է իրեն առաջադրված մեղադրանքի էությունը և հնարավորություն է ստանում կառուցելու իր պաշտպանական մարտավարությունը: Նախագծով այս հարցն առավել արդյունավետ է կարգավորվել, քան գործող օրենսդրությամբ, և նախատեսված 48 ժամը կրճատվելով հասցվել է մինչև 18 ժամվա. այսպես՝ քննիչը մեղադրյալին մեղադրանք է առաջադրում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալուց հետո՝ 18 ժամվա ընթացքում, բացառությամբ 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի (Նախագիծի հոդված 192, մաս 1): Նախատեսված ժամկետով ապահովվում է մեղադրանքը ներկայացնելու անհապաղությունը:

Տեղեկատվությունն *անհապաղ* տրամադրելու պահանջի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան այնքան էլ մեծ չէ: Այնուամենայնիվ փաստի կամ իրավունքի վերաբերյալ ցանկացած կարևոր տեղեկություն ակնհայտորեն պետք է մեղադրյալին տրամադրվի այն ժամկետում, որը բավարար կլինի նրա համար պատշաճ կարգով իր պաշտպանությունը նախապատրաստելու համար՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետին համապատասխան²:

Մարդու իրավունքների կոմիտեն գտնում է, որ մեղադրանքի մասին «անհապաղ» տեղեկացվելու իրավունքը պահանջում է տեղեկատվությունը տրամադրել, հենց որ մեղադրանքն առաջին անգամ ներկայացվում է իրավասու մարմնի կողմից: Կոմիտեի կարծիքով՝ այս իրավունքը պետք է ծագի այն ժամանակ, երբ հետաքննության ընթացքում դատարանը կամ քրեական հետապնդման մարմինը որոշում են դատավարական միջոցներ ձեռնարկել հանցագործության կատարման մեջ կասկածվող անձի նկատմամբ: Ըստ կոմիտեի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի պահանջները կարող են բավարար համրվել, եթե մեղադրանքը ներկայացվում է կա՛մ բանավոր, կա՛մ գրավոր, պայմանով, որ տեղեկատվության մեջ նշվեն այն օրենքները և վիճարկվող փաստերը, որոնց վրա հիմնվում է մեղադրանքը³:

Այս իրավունքը տարածվում է ոչ միայն գործով մեղադրյալ ճանաչված անձանց նկատմամբ, այլ նաև այն անձանց, որոնց նկատմամբ սկսվել է իրականացվել քրեական հետապնդում (ծերբակալում, խուզարկություն, բերման ենթարկում): Գործող օրենսդրությամբ քրեական հետապնդման հարուցումը ոչ միայն անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումն է, այլև մինչև այդ նրան ձերբակալելու կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելը: Սակայն պրակտիկայում

¹ Տե՛ս «Pellissier and Sassi v. France Judgment of 25 March 1999»:

² Տե՛ս «Chichlian and Ekindjian v. France Judgment of 29 November 1989»:

³ General Comment N 13: Equality before the courts and the right to a fair and public hearing by an independent court established by law (Art. 14): 13/04/84. CCPR General Comment N 13. (General Comments). (Twenty-first session, 1984):

ծերբակալված անձը փաստացի հաճախ չի կարողանում օգտվել իր նվազագույն իրավունքներից, քանի որ օրենսդրությամբ չեն սահմանվում կոնկրետ ժամկետներ, որոնց ընթացքում արձանագրությունը պետք է տրամադրվի նրան: Ուստի քրեական հետապնդման մարմինը երբեմն արձանագրությունն անձին հանձնում է ավելի ուշ: Օրենսդրությամբ ժամկետներ է սահմանվում միայն արձանագրություն կազմելու համար, այլ ոչ թե՝ ծերբակալված անձին այն տրամադրելու: Օրենսդրական նման բացի առկայության պարագայում փաստացի ծերբակալված անձը մինչև արձանագրությունը իրեն հանձնելը ծերբակալվածի կարգավիճակ չի ունենում, հետևաբար չի կարող օգտվել իր իրավունքներից:

Օրենսդրական այս բացը լրացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը Գ. Միքայելյանի վերաբերյալ որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ եթե անձին քրեական հետապնդման մարմին բերելուց 4 ժամ հետո չի հայտարարվում ծերբակալման արձանագրությունը, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ծերբակալված և իրավունք ունենա օգտվելու ծերբակալվածի համար օրենքով նախատեսված իրավունքներից: Անձը կարող է ունենալ նաև «բերվածի» կարգավիճակ. դա նախնական իրավական վիճակ է, երբ անձն արգելանքի է վերցվում և բերվում է վարույթ իրականացնող մարմնի մոտ: Այս դեպքում «բերվածը» ևս օգտվում է Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված նվազագույն իրավունքներից: Այսինքն՝ այդ բոլոր դեպքերում անձինք իրավունք ունեն անհապաղ և հասկանալի լեզվով տեղեկանալու իրենց արգելանքի վերցնելու պատճառների մասին:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով սահմանված մյուս երաշխիքն այն է, որ առաջադրված մեղադրանքը մեղադրյալին պետք է ներկայացվի *հասկանալի լեզվով*: Խոսքը դատավարության լեզվի սկզբունքի պահպանման մասին է: Մեղադրյալին նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն մեղադրանք առաջադրելու ու նրան հարցաքննելու ժամանակ, այլ նաև դատավարության ամբողջ ընթացքում: Որևէ խոսք չի կարող լինել մեղադրյալի ցանկացած իրավունքի իրացման մասին, եթե նա չի տիրապետում դատավարության լեզվին:

Եթե մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում դատավարության լեզվին, ապա մեղադրանքի առաջադրումը կատարվում է թարգմանչի մասնակցությամբ: Եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում¹ արձանագրում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի խախտում, երբ մեղադրանքը ներկայացվում է անձին իր համար ոչ հասկանալի լեզվով: Այս իրավունքի էությունն այն չէ, որ մեղադրանքը ներկայացվի մեղադրյալին մայրենի լեզվով, կարևորն այն է, որ մեղադրյալի համար հասկանալի լինի մեղադրանքը: Բրոզիչեկն ընդդեմ Իտալիայի գործով Ղատարանը որոշեց, որ ազգային իշխանությունների համար պարտադիր էր դիմումատուի խնդրանքը (այն է, որ ինքն ազգությամբ գերմանացի է և դժվարանում է հասկանալ ծանուցագրի պարունակությունը, հետևաբար խնդրում էր, որ այն ներկայացվեր գերմաներեն) բավարարելու համար քայլեր ձեռնարկել մինչև պարզելը, որ դիմումատուն իրոք իտալերենի բավարար իմացություն ունի իր մեղադրանքի բնույթն ու հիմքը հասկանալու համար²:

Կարծում ենք, տեղեկատվությունը, որը տրամադրվում է մեղադրյալին, պետք է ոչ միայն «հասկանալի լեզվով» լինի, այլև ամբողջովին հասկանալի լինի. այսինքն վարույթ իրականացնող մարմինը մեղադրանքը պարզաբանի մեղադրյալին հասկանալի բառերով՝ պարզ և մատչելի, որոնք չեն պարունակի մասնագիտական տերմիններ, իսկ դրանց առկայության դեպքում՝ նույնպես պետք է պարզաբանվեն:

¹ St´u «Brozicek v. Italy Judgment of 19 December 1989» and «Kamasinski v. Austria Judgment of 19 December 1989» և այլն:

² St´u «Brozicek v. Italy Judgment of 19 December 1989»:

Չպետք է մոռանանք, որ շատ հաճախ հանցագործություն կատարում են թերի կամ ընդհանրապես կրթություն չունեցող անձինք, հետևաբար նրանց համար բավականին դժվար կլինի մեղադրանքի էությունը հասկանալ: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ պարզաբանումներ անելիս համարժեքորեն հաշվի առնվեն անձի մտավոր ունակությունները, և տեղեկատվությունը փոխանցելիս վստահ լինեն, որ ներկայացված նյութի ծավալն ու բովանդակությունը ընկալելի են վերջինիս:

Անհրաժեշտ է նաև, որ տրամադրվող տեղեկությունը անձի համար լինի *բավարար*, որպեսզի վերջինս կարողանա պատշաճորեն նախապատրաստվել իր պաշտպանությանը: ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում սահմանել է, որ մեղադրյալին՝ իրեն առաջադրված մեղադրանքի մասին *ամբողջական և մանրամասն տեղեկության տրամադրումը* արդար դատավարություն ապահովելու կարևոր պայման է:

Հանցագործության մանրամասները չափազանց կարևոր են, քանի որ դրանց մատուցման պահից է կասկածյալը պաշտոնապես տեղեկացվում իր դեմ ներկայացված մեղադրանքի փաստացի և իրավական հիմքերի մասին¹: Պաշտպանյալի դեմ առաջադրված մեղադրանքների մասին ամբողջական, մանրամասն տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև իրավական և փաստական բնութագիրը դատաքննությունն արդար լինելու կարևոր նախապայման են: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի էությունը այն է, որ դա պետք է բավարար լինի մեղադրյալի պաշտպանությունը կազմակերպելու համար: Այս դրույթը չի պահանջում, որ ի սկզբանե մեղադրյալին ներկայացվեն բոլոր ապացույցները, այլ անհրաժեշտ է, որ այդպիսի տեղեկատվությունը հասանելի լինի մեղադրյալին դատավարության թեկուզ ավելի ուշ փուլերում, ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով²:

Մատոցցիան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ իր դեմ ներկայացված մեղադրանքի մասին մանրամասն տեղեկացված լինելու, ինչպես նաև իր պաշտպանությունը պատրաստելու համար համապատասխան ժամանակ և հնարավորություններ ունենալու դիմումատուի իրավունքները խախտված են, քանի որ դատաքննության ժամանակ վերջինիս ներկայացված ենթադրյալ հանցագործության օրը և վայրը լիովին չեն համապատասխանել սկզբնապես տրամադրված տեղեկություններին, և դիմումատուին հնարավորություն չէր տրվել պատշաճ կարգով պաշտպանվելու³:

Կարծում ենք՝ Եվրոպական դատարանի մոտեցումը հանգում է այն բանին, որ դատավարության վաղ փուլերում անհրաժեշտ է անձին անհապաղ տեղեկացնել իրեն առաջադրված մեղադրանքի մասին: Նրան պետք է ներկայացվի արաքի ոչ միայն քրեաիրավական որակումը, այլև դրա հիմքում ընկած փաստական հանգամանքները, որպեսզի վերջինս կարողանա ձեռնամուխ լինել իր պաշտպանության կազմակերպմանը: Այլապես անհնար է պատկերացնել, թե անձն ինչպես կարող է կազմակերպել իր պաշտպանությունը, եթե նա իրազեկվել է միայն արաքի քրեաիրավական որակման մասին: Սրա հետ մեկտեղ՝ Եվրոպական դատարանը գտնում է, որ բոլոր ապացույցների մանրամասները պարտադիր չէ՝ հասանելի լինեն մեղադրյալին նախաքննության վաղ փուլերում. դա կարող է տրամադրվել ավելի ուշ: Իհարկե անհնար է պատկերացնել, որ նախաքննության սկզբնական փուլերում վարույթ իրականացնող մարմինը գործով ձեռք բերած լինի բոլոր ապացույցները, քանի որ դրանք ամբողջապես հավաքվում են նախաքննության ընթացքում: Այսինքն՝ այստեղ կարևորվում է, որ մեղադրյալին տրամադրվի բավարար քանակությամբ տեղեկատվություն իր մեղադրանքի մասին:

¹ Տե՛ս «Pellisier and Sassi v. France Judgment of 25 March 1999»:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Mattoccia v. Italy Judgment of 27 July 2000»:

Միայն մեղադրանքի առաջադրմամբ է, որ մեղադրյալը հանրավորություն է ունենում իրացնել իր պաշտպանության իրավունքը: Հետևաբար, մեր կարծիքով, մեղադրանք առաջադրելուց հետո մեղադրյալին պետք է բավարար ժամանակ տրամադրվի՝ պատրաստվելու ցուցմունք տալուն: Գործող օրենսդրությամբ քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք առաջադրելու հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, իսկ մեղադրյալի խուսափելու կամ նրան հետախուզում հայտարարելու դեպքում՝ նրան բերման ենթարկելուց 48 ժամվա ընթացքում (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 212, մաս 1): Օրենսդրությամբ օգտագործվող «ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում» արտահայտությունը պետք է հասկանալ ինչպես 24 ժամվա սկիզբը, այնպես էլ 23 ժամ 59 րոպեն լրանալու պահը: Հետևաբար, երբ մեղադրյալին հարցաքննեն անմիջապես մեղադրանքն առաջադրելուց հետո, մեր կարծիքով, նա ընդհանրապես հնարավորություն չի ունենա նախապատրաստվելու դրան: Նախագիծը ևս գերծ չի մնացել այդպիսի կարգավորումից և կարծես թե որդեգրել է այն նույն մոտեցումը, որը գործում է այժմ: Այսպես, քննիչը պարտավոր է հարցաքննել մեղադրյալին մեղադրանք ներկայացնելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում (Նախագիծի հոդված 228, մաս 2): Դրանից ելնելով՝ առաջարկում ենք, որ օրենսդրորեն «48 ժամվա ընթացքում» արտահայտությունը փոխարինվի «48 ժամ հետո» արտահայտությամբ: Արդեն այդ ընթացքում անձն օբյեկտիվորեն հնարավորություն կունենա նախապատրաստվելու իր հարցաքննությանը, որի ընթացքում նա կկարողանա ինչպես խորհրդակցել իր պաշտպանի հետ, այնպես էլ՝ եթե չի ցանկանում ունենալ պաշտպան, անձամբ որոշել, թե ինչ կերպ է պատրաստվելու իր հարցաքննությանը (դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում նա հնարավորություն կունենա կողմնորոշվելու ցանկանում է ցուցմունք տալ, թե՞ ոչ): Նման ձևակերպումը հնարավորություն կտա ապահովելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի իրագործումը, այն է՝ բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ գործող օրենսդրությամբ մեղադրյալի իրավունքներ և պարտականություններ վերտառությամբ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով նախատեսված՝ մեղադրյալի իրավունքը, այլ միայն ամրագրված է, որ մեղադրյալն իրավունք ունի իմանալու, թե ինչում է մեղադրվում: Այս առումով, կարծում ենք, գործող քրեադատավարական օրենսդրությունը պետք է համապատասխանեցնել Կոնվենցիայի պահանջին և ամրագրել, որ մեղադրյալն իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով, անհապաղ և հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի, այն է՝ իրավական և փաստական գնահատականի մասին: Օրենսդրորեն նման կարգավորումը կարևոր երաշխիք կլինի մեղադրյալի իրավունքների իրականացման համար, քանի որ այդ իրավունքին օբյեկտիվորեն համապատասխանում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը՝ ապահովել այն: Նախագծով նախատեսվել է նման կարգավորում և այս առումով օրինադրույթը համապատասխանեցվել է Կոնվենցիոն պահանջին: Ամեն դեպքում մեղադրյալի այս կարևորագույն իրավունքի խախտումը հանգեցնում է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի խախտման, ինչի արդյունքում էլ ամբողջության մեջ խաթարվում է արդար դատաքննության իրավունքը, այն է՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

ОСВЕДОМЛЕНИЕ ОБВИНЯЕМОГО ПРО СУЩНОСТЬ И ОСНОВЫ ОБВИНЕНИЯ, ОБСТОЯТЕЛЬНО, НЕЗАМЕДЛИТЕЛЬНО И НА ЕМУ ПОНЯТНОМ ЯЗЫКЕ

Эмма Авагян

*Старший лаборант лаборатории криминалистики
кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
Главный специалист отдела совершенствования организации
следственных работ Специальной следственной службы РА*

Работа посвящена осведомлению важнейших прав обвиняемого. Это право было закреплено в международных документах и национальном законодательстве.

В работе автор возвращается к пояснению понятия «обвинение», которое было раскрыто в изучении прецедентной практики Европейского суда и Кассационного суда РА.

В работе так же представлены гарнатию понятий «незамедлительно» и «на понятном языке».

INFORMING THE ACCUSED ABOUT THE NATURE AND REASONS OF ACCUSATION IN UNDERSTANDABLE LANGUAGE, IMMEDIATELY AND THOROUGHLY

Emma Avagyan

*Senior laboratory assistant of the YSU Chair
of Criminal Procedure and Criminalistics
Chief specialist of the department of organizing and improving
investigative activities of Special Investigation Service of the RA*

The article is devoted to the most important right of the accused of being informed of the accusation. This right is enshrined both in international documents and national legislation.

The author has touched upon the clarification of the concept "accusation" in this work, which was disclosed by studying precedent practice of the European Court of Justice and of the Court of Cassation of the RA.

The guarantees providing the rights of the accused of being presented the information "immediately" and "in understandable language" are introduced in the work.

Բանալի բառեր - մեղադրյալ, մեղադրանք, անհապաղ, հասկանալի լեզվով, հանգամանորեն, բնույթ և հիմք, նվազագույն իրավունքներ:

Ключевые слова: обвиняемый, обвинение, незамедлительно, понятным языком, характере и основании, минимальные права.

Key words: accused, accusation, promptly, in understandable language, minimum rights.